

Հարգելի Մեկնարան,

Շնորհակալ ենք, որ դուք ցանկություն եք հայտնել դառնալ F5-Բլոգի Հեղինակներից մեկը եւ մեր կայքի էջերում տեղադրել Ձեր սեփական գրառումները եւ հոդվածները: Մեկ անգամ եւս հիշեցնում ենք, որ մեր ցանկությունը եւ **պահանջն** է, որ **F5-Բլոգի էջերում տեղ գտնեն միայն պատշաճ բովանդակությամբ գրագետ գրառումներ**: Հարկ ենք համարում հիշեցնել, որ, ի տարբերություն ինտերնետային ֆորումի, **բլոգը տարբեր թեմաների վերաբերյալ որակյալ գրառումների եւ հոդվածների շտեմարան է**:


Սյս նամակը ստանալու պահին Ձեր “Հեղինակ” կարգավիճակն արդեն ակտիվացած է, եւ դուք կարող եք F5-Բլոգի էջերում հրատարակել Ձեր սեփական գրառումները:

Ստորեւ ներկայացվում են այն պարզ քայլերը, որոնց դուք պետք է հետեւեք՝ F5-Բլոգի էջերում Ձեր հոդվածները տեղադրելիս:

**1. F5-Բլոգի Ձեր էլեկտրոնային խմբագրի հասցեն է.**  
<http://www.f5blog.com/be>

Խնդրում ենք հիշել այս հասցեն եւ զերծ մնալ ուրիշներին այս հղման մասին հայտնելուց (միեւնույն է, նրանք չեն կարողանալու մուտք գործել մեր համակարգ, եթե գրանցված հեղինակներ չեն):

2. Ինտերնետային բրաուզերի (Internet Explorer, **Firfox (!)**, Opera եւ այլն) հասցեների տողում հավաքելով վերոնշյալ հղումը, Ձեր համակարգչի էկրանին բացվում է գրանցման հետեւյալ պատուհանը:



The image shows a login form with a dark blue header bar. Below the header, there are two input fields. The first field is labeled "Username" and the second field is labeled "Password". Both fields are empty and have a light blue border.

Համակարգ մուտք գործելու համար Ձեզնից պահանջվելու է համապատասխան վանդակներում լրացնել Ձեր F5-Բլոգում ստացած ծածկանունը եւ գաղնտաբառը:

3. Ձեր էլեկտրոնային խմբագիրն ունի պարզ տեսք՝ վերելում տեղադրված 2 հիմնական մենյուով.

- **PUBLISH** – սեղմելով այս կոճակը, դուք կհայտնվեք գրառումը տեղադրելու էջում
- **MY ACCOUNT** – սա Ձեզ հայտնի անհատական հաշվի կառավարման վահանակն է, որն այտեղ ներկայացված է անգլերեն լեզվով եւ նոր արտաքինով:

Ձեր հոդվածը F5-Բլոգում տեղադրելու համար Ձեզ անհրաժեշտ է մուտք գործել PUBLISH մենյուն:

3. Ձեր էլեկտրոնային խմբագիրն ունի պարզ տեսք՝ վերելում տեղադրված 2 հիմնական մենյուով:

CP Home > Publish > New Entry > F5-Blog



**PUBLISH FORM CATEGORIES**

\* **Title**

**URL Title**

**Preview**  
**Quick Save**  
**Submit**

**Button Mode:** Guided ◦ Normal ◂

**<b>** **<i>** **<u>** **<center>** **<bq>** **<li>** **Link** **Email** **Image** **Close All**

Նախ, ուսումնասիրենք Ձեր էլեկտրոնային խմբագրի վերին բաժինը.

- **PUBLISH FORM** – ներկայացնում է հոդվածը մուտքագրելու էջը
- **CATEGORIES** – այտեղ դուք ընտրում եք այն բաժինը, որտեղ պետք է հրապարակվի Ձեր գրառումը: Եթե չեք գտնում համապատասխան բաժինը, ապա ընտրեք “Տարբեր”-ը:
- **PREVIEW** – Գրառման նախնական դիտում
- **QUICK SAVE** – Արագ պահպանում (գրառումը դեռ չի հրապարակվում)
- **SUBMIT** – Հոդվածի հրապարակում (ուշադիր եղեք, որ հոդվածը հրապարակվեք այն վերջնական տեսքի բերելուց հետո, այլապես հրապարակելուց հետո դուք չեք կարողանալու խմբագրել այն!)

- **TITLE**- Հոդվածի/գրառման վերնագիր. աշխատեք ընտրել կարճ վերնագիր, հակառակ դեպքում, միեւնույն է, Ձեր երկար վերնագիրը կկրճատվի եւ այցելուների համար կդառնա անհասկանալի

- **BOTTON MODE** – որեւէ նշանակություն չունեցող դաշտ է, թողեք նախնական normal-ը:

Վերջինիս տակ մեկ շարքով ներկայացված են տեքստային խմբագրման դրույթները: Դուք պարզապես ընտրում եք համապատասխան բառը/ բառերը եւ սեղմում անհրաժեշտ կոճակը:

- **b** – տառերի հաստացում (bold)
- **i** – տառերի թեքում (italic)
- **u** – տառերի ընդգծում (underline)
- **center** – տեքստի/պարագրաֆի կենտրոնական դիրք (BOLD)
- **bq** – մեջբերում (bloquote)
- **li** – թվարկում (list)
- **LINK** – հղման տեղադրում
- **Email** – E-mail հասցեի տեղադրում
- **Image** – Նկարի տեղադրում
- **Close All** – Փակում է այս շարքը

#### 4. Ավելի ներքեւ տեղադրված են տեքստի մուտքագրման դաշտերը



- **Body** – Սա Ձեր գրառման այն մասն է, որը հայտնվում է մինչեւ “Կարդալ ամբողջ տեքստը” տողը

- **Extended text** – Սա Ձեր գրառման ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ է, որը, այցելուն, սեղմելով “Կարդալ ամբողջ տեքստը” հղումը, տեսնում է որպես Body-ի շարունակություն:

Հարկ ենք համարում առանձնահատուկ նշել, որ Body-ում առկա տեքստը **չպետք է կրկնվի** Extended Text-ում: Հիշեք, որ **Ձեր գրառման կարճ տեքստն իրենից ներկայացնում է Body-ն, իսկ ամբողջական տեքստը՝ Body + Extended text:**

Եթե Ձեր գրառումն ինքնին կարճ է, ապա դուք կարող եք այն լրացնել միայն Body-ում: Body-ի երկարությունը չի կարող լինել ավելի, քան 200 բառ: Սա չի նշանակում, որ դուք պետք է ամեն անգամ հաշվեք Ձեր Body-ի երկարությունը եւ ստուգեք, թե արդյո՞ք այն չի գերազանցում թույլատրելի 200 բառը: **Մեր համակարգը Body-ի 200-րդ բառից սկսած բառերը ավտոմատ կերպով կտեղափոխի դեպի Extended text:**

**Կերեւոր հմտություններ.**

- տարբեր պարագրաֆների միջեւ թողեք **մեկ ազատ տող**
- մեր համակարգը ճանաչում է միայն **UTF-8 (unicode) տառատեսակները**, այնպես որ հայերեն գրելիս օգտվեք **միայն** Unicode կոդավորումից:

Լրացուցիչ հարցեր ծագելու դեպքում խնդրում ենք ազատ կերպով [տեղեկացնել](#) մեզ: